

Հ Ա Ն Դ Է Մ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԱՐԴԻ ԵՒՐԱԿԱՑԻՔ ԹՈՒՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Շիրակացւոց զլիաւոր զբաղմունքը՝ մշակութիւնը, և անկէ արդիւնաւորած ցորեանն ու անոր 'ի հաց փոխուելուն կերպը յիշելէն ետքը, հարկաւ կը հետեւէր անոր հետ միացած ու բաղադրուած կերակուրներն ալ յիշատակել, որ կատարուեցաւ արդէն անցողաբար նախընթաց հատուածով. տեսնանք հիմա ցորենէն դուրս մշակած արմուիքն:

Ոչ Շիրակացիք միայն այլ և բոլոր Հայք, տարւոյն դրեթէ չորրորդ մասը խիստ պահեցողութեամբ կ'անցընեն. ուստի ջերմին կերակրոց պէտք կայ, և եղէն ալ դուրս հարկաւոր բան մը՝ կերակուր շինելու 'ի պահոց աւուրս. այս հարկաւորը ձէթն է: Ձէթն՝ ոչ ձիթապտղոյն ոսկերց պարարիչ իւղն՝ այլ կտաւատի ստամոքսի վրայ բունացող ծուծն է, զոր կը հանեն տեղացիք՝ իրենց բնական ու բնածին ճարտարութեամբ ճմլելով գերանաց խուրձի մը տակ:

Ձիթաբեր սերմանց մին միայն ուտելի ձէթ ունի և միւսներն պարզ վառելու և ուրիշ պիտոյից կը գործածուին: Ուտելի է միայն տալիսակ կոչուած կտաւատի ձէթն. իսկ կելի, աւորիկ կամ աւորիքն ու խարտաչև վառելու և ուրիշ բաներու համար են: Աւորի կամ աւորիք անուանը 'ի Հայս սկզբնաւորութեան աւանդական պատմութիւն մը պիտի ունենայ անշուշտ, բայց ուսմական աւանդութիւնն բան մը չի յիշեր:

Կաննելիէն ալ քիչ շատ ուտելի ձէթ մը կը հանեն: Ասոնցմէ դուրս կայ կլու, քուշնայ կամ՝ դուշնայ, որոնք մարդկանց ու կենդանեաց հաւասարապէս 'ի պէտս կը գործածուին. նոյնպէս առուոյտն պարզ 'ի պէտս կենդանեաց շատ խնամքով կը մշակուի: Ըսածնիս բոլոր արտերով ցանածներն են, և ոչ այն տեսակ տեսակ բանջարեղէնքն՝ զորս առտնին ընտանեկան պարտիզաց մէջ առանձին պիտոյից համար կը մշակեն, կամ առանձին լայնատարած տեղոյ մէջ ցանած բանջարքն 'ի վաճառ:

Այս արմուիք իրենց հատկաց կըրակութեան պատճառաւ կամնասայլիւ լաւ չեն համարիր մանրել. անոր համար հնարեր են չորրորտանեաց պծեղներով բաժնել հատիկներն իրենց ծալ 'ի ծալ կեղևանքէն: Կը փռեն կտաւատն, ասորին և որ քստ կարգի, և շարք մը եզանց իրարու վրէ կապելու ու ցուկներ՝ կը չրջեցնեն փռուածին վրայ. և ասով արմտեաց գոյացական հատիկ պարփակող կեղևներն կը ճզմուին և հատիկներն կ'ազատին. իսկ մնացած ցողուն մասն իր ամբողջութեան մէջ մնալով՝ շէնքեր ծածկելու կը գործածուի, և ձեակեակ կը կոչուի:

Այսպսփս կը բաւէ իրենց զլիաւոր զբաղանաց և անոր մասանց վրայ. համառօտիւ աչք մ'ալ տանք այն մանր արուեստից կամ լաւագոյն բսելով զբա-

դանաց՝ որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերութիւն մ'ունին Շիրակացւոց էական արուեստին և իրենց պարելու կերպին հետ: Յիշելի մանր վերբերական արուեստից մէջ զլիաւոր տեղին ունի ընգհանուր անասնադարմանութիւնն, և 'ի մասնաւորի կովուց, եզանց, ոչխարաց, ձիոց և գոմէոց դարմանատարութիւնն: Շիրակացւոյն անասնադարմանութիւնն տեսական մաս չունի, և ոչ զարգացուն դրութեան մը վրայ կայացած է. այլ միակ նպատակն է անասնադարմանութեան իր փոքր շահն և իր պէտքն. այսու հանդերձ տեղւոյն անյաջող դիրքն, ստէպ հանդիպած երաշտութիւնն, կարկըտահարութիւնն, երբեմն ալ մարախաց անխնայ արշաւանքն, կենդանեաց խտից շատութիւնն ու յաճախութիւնն քիչ շատ գժիրակացին յիրս իրս աչքաբաց, նախահոգակ ու փորձ ըրեր են: Մայիս ամսէն կը սկսի մտածել անասնոց վրայ գալի ձմեռն. եթէ գեղին չափաւոր սահմանին խոտն չի բաւեր 'ի ճարակ բոլոր գեղացւոց անասնոց ինչուան հոկտեմբեր ու նոյեմբեր ամիս, ևայլայ կ'ելլեն ամեն գեղացիք մէկ ուրիշ միայն առ այս սահմանեալ գեղ մը, ամենքն մէկտեղ իրենց բոլոր կենդանեօք բաց 'ի լծելի եղանց և 'ի կիծելի մի կամ երկու կովէ. ընտանեաց կէսն ալ հօն կ'երթայ 'ի պահապան, ուր վեր 'ի վերոյ ամառնային տուններ շինած կան. հօն կը պատրաստուի վաճառելի և ուտելի կարագն, պանիրն, ուսերն. հօն կենդանիներն կը ծնանին, կ'աճին, կը մեծնան և կը յընան 'ի ծնունդ: Օգոստոսին կը գուշակէ Շիրակացին թէ իր ամբարած ու ամբարելի խոտովն ու դարմանովն (յարդովն) կրնայ եթէ ոչ պահել կենդանիները երկայն ձմեռան մէջ. որ եթէ բաւական չէ, լոռի և երեւան գաւառաց կողմերն՝ որոնք խոտաւէտ են և կարճ ու մեղմ ձմեռ մ'ունին, քառս կոշ սրայ իր կենդանիները, որ է բակ վարձով կ'ապրեցնէ զանոնք 'ի սովէ:

Գեղացւոց խնամոց անդրանիկ վա-

յելողն կողմն է, հիմն միանգամայն և հաստատութիւն անոնց հարստութեանը ու բարօրութեան. որովհետև աղբիւր է այն ամենայն բարեաց՝ որով գիւղական կեանքն կ'երջանկանայ: Միշտ տնածին կով կ'ախորժին ունեւնայ. ստերվ կովն շատ անգամ 'ի պատուհաս եղան պաշտօն կը կատարէ թէ որ շուտով սպանդանոց չի դրկուի. իսկ բազմածին կովերն լծոյն ծանրութեանէն բոլորովին ազատ իրենց պաշտօնին օգտաւէտութեան ու ազնուութեան համար տեսակ տեսակ վայելքներ ունին, որոնք բազմափորձ տանտիկնոյ ձեռքէն կը բղխեն սովորաբար: Ծանրանալու ժամանակն սեպտեմբեր ամիսն է՝ ընթեմեան և առաւելագէս Շիրակայ աղքատ միջոցն. ուստի փորձ տանտիկինն առաւօտը արածելու երթալէն առաջ և երիկոյն դառնալէն վերջը՝ խաշած քուշնայով և ուրիշ անասնանունգ կերակուրներով կը պարարէ ծանրուել կալը. նոյն խորակաց կ'արժա նաւորի նաև յետ ծնանելոյ՝ որպէս զի առատ կաթ տայ: Առատակաթն կովերն սակաւաթիւ են. սակաւ է կաթերինը՝ բայց եղոտ ու պարարտ քան զկաթն առատ կարծուած կովերու: Գրախառն կաթն, կովուն ինչպէս ամեն նորածին կենդանեաց նախկին կաթն խեժ կը կուչուի, ուսկից կը շինեն դաշ:

Շատ հարուստ գեղացին հազու առ առաւելն 30 կով կրնայ պահել, միջինն 15, 10, 7, 6 և աղքատն 4, 2, 1: Իւրաքանչիւր ոք իրեններուն կաթն վայելելով հանդերձ կարագ ու պանիր ալ կը շինէ: Բայց որովհետև մէկ երկու կովու կաթով պանիր չի շինուիր, կանայք գիւտ մը մտածած են կամ յաւանդութեան ստրված: 5, 6 և ինչուան 20 տուն կը միաբանին և 19 տունք կարգաւ և չափով կու տան քսաներորդ տան սյուշափ ժամանակի համար կաթն. ուրուն չափը թէ տանողն և թէ առնողն կը նշանակէ և յետոյ կաթն կը դառնայ հաշուով առ փոխատուս ըստ ժամանակին, քսաներորդէն ինչուան առաջ ներորդն. և աշունն վրայ հասնելով

հանդիսին վախճան կ'ըլլայ: Թէ պանիր շինած միջոցն և թէ ազատ առնն եղ կը շինեն: Կաթնն ալէկ մը կ'եփեն և կրակին վրայէն յետ քաշած քիչ մը կը հովացրնեն. ապա տեսակ մը մակար- գով մէջը խառնելով՝ մածուն կը շինեն. և մասնաւոր ձևով շինած հողէ կամ փայտէ կարասի մէջ կը վաթեն որ ձնոյն կամ խնոցի կը կոչուի, որուն բերանը հարելու ժամանակն՝ անանոց քարնկ կոչուած փորուն մաշկով կը գոցեն. փռ- րիկ ծակ մ'ալ կը կրէն ալ կոպին վը- րայ, ուսկից խնոցաւաքն պզտիկ փայ- տով եզին 'ի թանէն բաժնուիլն կ'ուզէ իմանալ և շնկալ կ'անուանի, որ տար- բեր է բունկալէն, որ բունի մէջ թու- ղած հաւկիթն է, որպէս զի գրգիռ- ըլլայ հաւուն հօն ածելու: Ելած եղն կարագն է, որ զեռ մաքրուելու կարօ- տութիւն ունի, որպէս զի արդար ել ըլլայ, ինչպէս կ'ըսեն տեղացիք. և այս մաքրութիւնն կը կատարուի հալելով զկարագն մեծամեծ կաթսաներով և հանելով անոր միջէն աւելորդ պարար- տութիւնները:

Իրաւ այսչափ խնամք կ'ըլլուի կու- վուն իր հաստատուն շահարեութեան համար, բայց էական խնամքն մոռ- ցուած է բոլորովին. որ է բսել կովուց և հետևաբար եզանց տեսակն լաւցընե- լու կամ գոնէ վատթարացնելու վտան- քէն խայրսելու խնամքն կովերն փոքր, փոխտ են, ինչպէս իրենցմէ ծնած որ- թերն ալ. և որ աւելի չարն է, շատ անգամ թոքախտութեամբ վարակեալ կողն իրեն նման որթուց յաջորդութիւ- նը կը շարունակէ 'ի վնաս ոչ միայն միա- բնակ կենդանեաց, այլ և անոնց կաթն ուսող բանաւորաց:

Կովուն նախկին երեխայիքն սնա- կան որթեր ծնաննն է, որթեր՝ որ Շի- րակացի երկրագործին թէ ու թիկունք են, և կովէն վերջը երկրորդ շահուց դուռն: Որձ որթը երկամայ, եռա- մեայ, կը մալեն ու լծոյն կը վարժեցը- նեն, ապա թէ ոչ կը բթանայ ու ան- վարժ կ'ըլլայ բոլորովին: Շիրակացւոյն եզներն ընդհանուր երոպական եզանց

գեղեցկութիւնն, ամուր կազմուածքն թերևս և ուժն չունին. բայց այնպիսի դժուարին հանգամանաց մէջ ունեցած սովորութեամբն, ժրութեամբն ու տաժանելի կենքն գրեթէ անոնց զու- գակիւ ու յարգի են. և կրնանք բսել որ եթէ եւրոպական եզինը նոյն համ- դամանաց մէջ ըլլային, պիտի չկարե- նային ծառայել Շիրակացի երկրագոր- ծին այնպէս՝ ինչպէս կը ծառայեն այն փոքրիկ, փոխտ և 'ի բազում վաստակոց տաժանեալ զանդազարայլ վաստակա- ւորքն:

Երկրագործին մեծ հոգերէն մէկն ալ է ութամեայ գթութեան արժանի տա- ժանութիւնը մեղմել և պսակել քառ- ամեայ վայելից հանգստեամբ: Զմեռ- նամտին կը պատրաստեն կերպ կերպ գիրացուցիչ անասնանունք խորտիկ- ներ, որոց առաջինը կոպրոնն է: Կտա- ւատէն և անոր ամեն տեսակէն ձէթը քամելէն ետքը՝ մնացած չնչն (ճիպրէ) ուռակերտ լայնայատակ կողմներու մէջ ճնշիչ գերանաց տակ մեծամեծ կարկանդակներու ձև առած՝ կենդա- նեաց ախորժահամ ու պարարող կե- րակուր կը փոխուի, և աւելի եզանց, կովուց և գոմոց. որ եթէ առուոյտի կամ գունայի հետ խառնած ըլլայ՝ ևս առաւել օգտակար կ'ըլլայ. բայց սովո- րաբար զիւրին չէ միշտ առուոյտով և գունայով խառնելը, ուստի յարդով կամ ըստ տեղւոյն բարբառոյ դարմա- նով կու տան, որ աննման արդի գոր- ծիքներէն ելած յարդին՝ կամին ալիւ- բաձև մանրած ցորենի ցողունն է: Եւ այսպէս վեցամեայ մի և նոյն չարա- տանջ և ամենավտիտ եզն մօտ զարնա- նամտին իր մարոյն մէջ առիւծ կը դառ- նայ, մորթին հին մազն ձգած և նորա- բողբով մազերով զարդարուած, լծըն- կէց ու վայրենի:

Եւրոպական ձիարչաւ, կառարչաւ ու նաւարչաւ հանդիսից նման հանդէս մ'է Շիրակացւոյն զարնանամտին վեց ամիս ախոռ փակուած եզանց ու գոմ- շոց արձակուորքն և զանոնք 'ի լուծ կրթելու փորձն. անանկ որ ամիս

մը պէտք է եզ մը 'ի լուծ վարժելու հա-
մար: Որչափ որ երկարատև ձմեռուան
մէջ Շիրակացի երկրագործն գրեթէ իր
բերնէն կտրած կերակրովն կը պարարէ
իր վաստակակիցները, նոյնչափ ալ իր
ազիտութեամբն ու մասնական խնամ-
քովն՝ անոնց ամենազգի ծանր ու մա-
հացու ախտից կամ առիթ կ'ըլլայ կամ
անկարող՝ հիմամբ դիմացն առնելու:
Վասն զի գարնան՝ չէ գիտելի ստուգիւ-
թէ 'ի ֆլասակար խոտոց կամ թէ յայլ
ինչ պատճառէ՝ փոխադրական հիւան-
գութիւն մը կը ծաւալի 'ի կենդանիս,
աւելի կովուց ու եզանց մէջ, գունոց քիչ
անգամ, ձիոց ու ոչխարաց ոչ բնաւ, որ
տապալախ կ'ըսուի: Չարաչար կը վիրա-
ւորուին կենդանոցն պծեղունքն ու բե-
րանն, և անկարող կ'ըլլայ թէ ուտելու
և թէ շարժելու, որուն սովորական դեղն
կպրածիւթն համարուած է: — Ուրիշ
չարչարանաց աղբիւր մ'ալ անասնոց
համար երկայն ճամբորդութիւնքն են:
Շիրակէն ինչուան Տիխիս, Սխլցիս և
Երևան երթալն արգէն երկրագործու-
թեամբ տաժանեալ եղներով ու քարոտ
սաստիկ շարուփոս ճամբաներով, ձո-
րաչառ ու լեռնաչառ գարձուածներով
տեղացոյն խիստ կարօտութեան ու չու-
հասիրութեան յայտնի ցոյց մ'է. և երա-
նի թէ կարենար հասնել միշտ նպատա-
կին, այլ 'ի հակառակէն յաճախ մեծա-
մեծ տուժիւք ալ կը լըննայ ճամբան, գո-
ղոց յանձնելով ոչ միայն զկենդանիս
այլ և շահած ստակն ալ, երբեմն ալ
զանձինս 'ի մահ ազգի ազգի. ասիկէ
տասը տարի կամ փոքր մի ևս աւելի
առաջ՝ գեղի մը ծաղիկ հասակին մեծ
մասն կենդանեօք ու ստակովն գերեզ-
մանազուրկ՝ կուր գետին գազանու-
թեան կերակուր եղաւ:

Որդէն չարատանջ լծոյն զարնուած-
քէն վիրաւորուած լսողճ անասնոց
վզերն՝ նորէն անխիղճ լծոյն ծանրա-
բեռնութեան սակ խոնարհեցնելով
պարանոցն՝ ճամբայ կ'ելլայ: Գուշակե-
լու է թէ ինչ կը կրէ անբարբառ վաս-
տակաւորն. և սակայն համբերատար
խիստ ցաւոցն ու վշտաց՝ զորս չի կրնար

բացատրել, կը համակրի աստուածային
անիծանաց առ մարդն թէ՛ քրտաւք և
րեսաց քոց կերիցես զնաց քո:

Տեղւոյն դրից համեմատ ստիպուելով
երկրագործին համավաստակ ընկերն
քարոտ ձորեր ու լեռներ չափել, ու չա-
րատանջ լլկեալ 'ի նոր բռնուած տա-
պախէն՝ կ'անչնչանայ ողորմելին 'ի
վաստակաւ. ողջ եղինք անգամ և գո-
մէջը լերանց ու բլրոց գլուխն ելլելու
համար իրենց հեռաձիգ բեռնաւորեալ
սայլովն՝ անխնայ զոհ կ'ըլլան, սայլին
չէնքէն և զայն բեռնաւորելոյ կերպին
ձախորդութեամբ: Վասն զի խոտն և
որայն սայլին վրայ բառնայն ամենուն
գործը չէ. յաճախ սայլին յետակողմն
ծանրաբեռնելով՝ ենթակայ կ'ըլլայ զը-
խոյն կողմէն վեր բարձրանալու. և թէ
որ լեռ կամ բլուր ելլալու ատեն չը
զգուշանան ծանրոց դնելու կամ կենա-
լու եղանց լծոյն վրայ, սայլին գլուխն
վեր կ'ելլայ, և եզներն ալ վեր հանելով
կը խեղդին՝ թէ որ ճարպկութեամբ
չխցուին սամիք ու սամեթելք և ազա-
տին: — Եւ որովհետև դժուար կը յա-
ջողին տնածին եզներ ունենալու, ստի-
պուած են կամ որթիկներ առնելու
մեծցնելու կամ եզներ, իջնավաճառքն
են քարաքեղաւ կամ քերթիւմ կոչուած
թուրքերն. որոնք լոռի գաւառին կող-
մերն աղէկ խոտաչառ դաշտերու մէջ
կը սնուցանեն կովուց ու արջաոց բազ-
մութիւն մը, որոնցմէ ծնած ու մեծ-
ցած որթերն կը ծախուին չրջակայ գա-
ւառաց մէջ. թէպէտ զասոնք 'ի լուծ
վարժելու համար քիչ շատ կորուստներ
կ'ըլլան՝ որովհետև վայրենի են, բայց
ապա ընտիր եզներ կ'ելլան:

Իւրօքանիւր գեղն իր սահմանն ու-
նի. մի և նոյն գիւղական սահմանա-
փակ երկրին մէջ թէ արտորայք կան և
թէ կովուց, ոչխարոց ու բլուր կենդա-
նեաց միանգամայն արածելու տեղեր:
Գիւղական մ'օտար գիւղի սահմանին
մէջ չի կրնար արօտի հասնել իր կենդա-
նիքը, որուն համար զիւր գիւղի հետ
կոխ ալ կ'ըլլայ երբեմն:

Ներեալ է ամենայն ումեք՝ մասնաւոր

ինամոց, հիւանդութեանց ու աւելի շահարեութեան պատճառանգը կովկասում նախքան բաժնել իր սեփական կսվերը ու զատ արածել, միշտ նախորդին սակն վճարելով ըստ օրինաց, որուն յանձնուած է գիւղին բոլոր նախիրն արածելու հոգն մայիսէն ինչուան հոկտեմբեր ամիս: Եւ այս անխախտ սովորութեան յայտնի նշան է հոկտեմբեր ու նոյեմբեր ամսոց անուան փոփոխութիւնն, զորս ռամիկն նախըրբող և սրբապա կը կոչէ, որովհետեւ այն ամսոց մէջ կը լըննայ նախորդի և որթարածի պաշտօնն: Հակառական սովորութիւն չէ և ոչ ալ ներելի՛ ամառը իւրաքանչիւրն իր ոչխարը արածել. այլ ամբողջ գիւղի մը հօտն՝ որ առ նուազն 200 ոչխարէ կը բաղկանայ, կը յանձնուի հովուի մը կամ հովուաց, որոնք սովորաբար փուրդ են երբեմն ալ Հայ: 200 ոչխարի տէրն կարող է սուանձին հօտ կազմել ու հովիւ ունենալ: Ոչխարքն դմակաւորք են, և 12 ոչխարի տէրն 4 ալ այժ կ'ունենայ. բայց համեմատաբար ոչխարն միշտ շատ է, և այժն մեծ յարգ մը չունի:

Կան մեծամեծ այժեր ների կոչուած իրենց պաշտօնէն. վասն զի միշտ հօտին կարապետ և առաջնորդ են. անոր համար գիշերները հովիւն ապահովութեան համար զանիկա թիկն կը կապէ՝ որպէս զի յանկարծ չխրտի ու դուրս չելլայ՝ ոչխարի հօտն իրեն ետևէն տղերով. երբեմն ալ եթէ բեռնակիր է մը չունենայ հովիւն՝ անով կը բաւակա նանայ, վասն զի բեռնակրութեան ալ ընդունակ է. երկայն, գետին աւրող մազեր ունի, ընդհանրապէս սպիտակափայլ ու ծամածուռ սրածայր եղջերիկներ: Հովիւն ամեն մասամբ զարմանիչ է ոչխարաց, բժիշկ, կիժող, կտրող. բայց որովհետեւ կարելի չէ որ մէկ երկու հովիւ կարենան ամեն ոչխարատէր գիւղացու տան մէջ նոյն պաշտօնը կատարել, անոր համար գլխաւորի տունը կը կենայ և միւս մասնակից գիւղացւոց միայն բժշկութիւն կ'ընէ. անոնց ոչխարներու թիւն ու նշանն պիտի գիտ

նայ, և նշանին սովորաբար խարուսն է կամ հատուսն ականջաց, կ'ենթադրուի այլ և այլ օրինակաւ: Հովիւն ունի ուրիշ օգնական մը գասնարած՝ որ տռաժոյ կոչուի ըստ ֆրոյաց բարբառոյ: Գառն ու մաքին առանձին կ'արածեն ինչուան ժամանակ մը, և յետոյ կը խառնեն միատեղ:

Հովուին ապրուստն, հագուստն բարձրնչխար տիրոջ տունէն է: Զգեստուց մէջ էականը կոշիկայն է, որ թաղիքէ շինուած պզդնաւոր հաստ հագուստ մ'է վեղարով. և սահմանեալ է պատրաստութեամբ զհովիւն ոչ միայն յանձրէ և 'ի ցրտոյ, այլ և 'ի մեծապանգուած կարկրտէ. թէ որ մօտաւոր սյրի մը մէջ չկարենայ ապախինիլ իր հօտին և այդ զգեստը կը ծառայեցնէ նաև իւրբնանկողին: Ունի ձախակողմեան վըրայ ունելիքներ, յորս կը յեցընէ հովիւն իր բիրը (կոպալ) ու բարակ վարողը, որոնց առ իրեարս բախմամբ՝ հօտն կը յորդորի առաջ կամ յետ գնալ ձախ կամ յաջ: Հովիւն ունի տխուր նուագող փող մ'ալ, որուն ձայնը ոչ միայն բանաւորաց հոգած սիրտը տխրութեանէ 'ի տխրութիւն հանելով կը մխիթարէ հակառակք, այլ և զանբան ոչխարսն կը զարթուցանէ 'ի յիշատակ յարձակման գայլոց. անոր համար փող չալնէ 'ի մութ գիշերի ու մառախլապատ օրեր, և հեռաւորագոյն անգամ՝ ոչխարն 'ի ձայն փողոյ՝ ճեպով կը դիմէ առ հովիւն, և նեղուելով կը մտնայ 'ի հօտն:

Հովուին պաշտօնն կը սկըսի մարտին և կը լըննայ սեպտեմբերի սկիզբը, և ապա կը սկըսին շնանային հովիւք: Հովիւն անհետք կորսուած ոչխարին պատասխանատու է. անոր համար պարտաւորեալ է յանգէտս իւր գիշէն փառտաճ (գայլէն փարատեալ) ոչխարին գոնէ փոքրիկ մէկ մասը բերել առ տէրն: Հովուաց համբայ ելլելէն առաջ մեծահանգէս արարողութիւն մը կը կատարուի օգոստոսի 15 ին վերափոխման տօնին օրը: Ամեն մարդ որչափ մաքի, գառն, խոյ (խոյ), քոխի (տա-

րեկան արու ոչխարներ մախալ կամ ոչ) ունի, մաքուր կը լուանայ գետին մէջ, որուն տիանցը վրայ կը թափին բոլոր գիւղականք զարգարուն, զուարթ տնգինի գուարթու թեամբ ու լիասեղան: Կարգաւ լուանայէն ետքը՝ հովուին պարտքն է ոչխարաց բուրգն կը արել:

Յետ հանդիսին՝ հովուին վարձքը վճարելու կարգն կու գայ, որ է 10 ոչխարին մին, բայց ոչ իր ընտրածն: Հօտն ՚ի հասարակ աւուր գեղը կը դառնայ. և ամին ոչխար վարժ ըլլալով՝ մէկէն իր տիրոջը տունը կ'երթայ, և կ'իծուելով՝ կը տարուի դարձեալ ՚ի ժողովարանն, ուսկից հովուին իր հանգիստն աւած՝ նորէն յարօտ կը հանէ: Երբեմն ՚ի հակառակէն գեղայի կ'իծող կանայք կ'երթան առ հօտն ՚ի դաշտ և աւելի լեռանց գլուխներ, ուր են սովորաբար ոչխարաց ամառանային գիշերօթեան փարախներն. և հօն նստած կարգաւ նեղ անցքի մը դիմաց, և ոչխարաց խումբն ետևին ձգած, անոնք վարժ ետևէ ետև կը շարուին կ'իծողաց գիմաց. բաւական է որ միտ զնէ իւրաքանչիւր ոք իր ոչխարաց նշանին և վրիպակաւ այլոց ոչխարը իւրը կարծելով չի կ'իծէ: Կ'իծելէն ետքը դառններն կ'արձրկեն առ մարս՝ որպէս զի միացած Դաթն ծծեն, և յայնժամ՝ նոր տեսարան մը կը բացուի առջևինս. բազմութիւնք դառանց աղաղակաւ կը խառնին ոչխարաց խմբին մէջ. և երկու կողման աղխարչ բառաչն ՚ի սէր և ՚ի խնդիր մօր և զաւկին՝ ականջ կը խլացնէ. ինչուն որ ամեն մէկը իր բնիկ ծնունդն ու ծնողը գտնայ ու հանդարտին ՚ի քաղցր դգուանս իրերաց, մին լզելով՝ միւսն ծծելով: Յետոյ կ'անջատին նոյն բառայմամբ, և խիստ դժուարութեամբ կ'երթան կամ կը տարուին իրերաց հեռու. իսկ կանայք պարարտակաթն դաշտուրանաւ լի տուն կը դառնան:

Բայց ահա այնչափ խնամոց վայելող հօտն և բազում բարեաց արբիւրն՝ յանկարծ գիշերուան մը մէջ ՚ի գայլոց ցրուեալ աստ և անդ, կէսը կերակուր

կ'ըլլայ անոնց անյագ կոկորդին, միւս կէսը ցիրուցան կը կորսուի, և եթէ մնայ քան մը, այն ալ ՚ի շնորհս դիպաց կը մնայ: Կը պատահի դարձեալ որ մայրս ամսոյն արածած խոտէն լուծուան կ'ունենայ, որ և ամսոյն անուամբ մնայիս կոչուի. և եթէ խնամք չտարուի այլոց նիւթերով՝ չարաշար կը վիրաւորուի դամկն, մինչև հոտիլ ու սրգնտիլ, և ոչխարն կը մեռնի:

Հայոց խաչնագարմանութեան քիչ բայց ձիագարմանութեան կամ աւելի ձիասիրութեան վկայքն ՚ի հնոց շատ են. և արդի բուն իսկ հայկական հողին վրայ բնակողաց առ այս միտումն՝ հին հայկական ձիասէր միտման կենդանի վկայ ու մանրանկար կրնայ սեպուիլ: Գոնէ արդի Շիրակայիք աւելի կը սիրեն ձին վայելել քան թէ օգուտ քաղել անկէ: Շատերն միշտ խլուրախ մը կը պահեն, և անկէ փուռակ ունենալուն չունենալուն վոյթ չեն ըներ, բաւական է որ ձիարչաւի միջոց, հեռու հարսնածու երթալու ատեն, և որ և իցէ հանդիսաւոր տեղ՝ քայլնթացիկ ու գեղաւոր փայլի ընկեր ձիոց մէջ: Բայց քան զամեն կենդանիս ձիոց տեսակն լաւցընելու խնամքն շատ է: Հասարակ ու ծերացած ձիերն կը ծախուին չարվառարաց ² և ուրիշ վաճառական մարդկանց: Արու ձի ալ կը պահուի ամենայն խնամքով. որ գուրս հանելու ատեն, ՚ի բով ձգած ցորենի հատիկի պէս արագ արագ ու ժիրածիր կը խայտայ ու կը խաղայ իր ձիասէր հզոր վարիչ և ուղղիչ վերելեակ երիտասարդան. որ ձիոյն արագաշարժութեան ու ժրութեան ոգի ու կենդանութիւն է. և անոր ամեներագընթացից ատենն իսկ՝ երազալթ և թըռչնոյ պէս կը խոյանայ ՚ի վայր մինչև ՚ի գետին, և կը սրանայ ՚ի վեր մինչև ՚ի

1 Խորի բառն թերևս գրարատ խորեթին ըլլայ, որովհետև ընդհանուր ամեն կենդանաց էգն աւելի անուսայ է:
 2 Զարգացող կողմին հեռուէն բերած պատու ծախողներն, որոնք ձիով Երևանէն և ուրիշ տեղերն կ'երթան կը բերեն:

Թափոնն երկու կողմանէ ալ անխորի, և ճրիկն կամ ձիկն խողին մէջ ամենին անհարուածելի կը մնայ: Վասն զի ոտիին հարուած կըսելու ատեն քաջ ձիւփարն քաջ ձիոյն՝ արագագէս կը պատսպարի 'ի ներքոյ նորա: Գեռ զձիս 'ի կոռս լծելու փորձն գեղացւոց մէջ մտած չէ. և ձին ինչպէս ուրիշ աւան կենդանիք՝ ձմեռը միայն փակուած կը կենան ակոսին մէջ, ամառը ազատ կուլու նախրին հետ առաւօտէ մինչև ցերեկոյ յարօտ կ'երթան, 'ի բաց առևալ որձ պահժու ձիերն՝ որոնք միշտ ներսը մնալուն պատճառաւ ախոռի ձի կը կոչուին: Զիերն ալ հիւանդութիւններ ունին, որոնց բժիշկն իւրաքանչիւր գեղացւոց բնական լոյսն ու փորձն է:

Ռուսիոյ Շիրակ գաւառն գոմէջ պահելու շատ յարմար չէ. սակայն կարևոր հարկ մը կը ստիպէ շատերն ոչ միայն թելու համար գոմէջ ունենալ, այլ և մատակարար պահելու, որ էք գոմիին սեփականուած է ուսմիկն մէջ: Դարձեալ եզանց ուժոյն կորզ երկիր պատուելու

անբաւականութիւնն կարևոր բրած է գոմէջը: Ինչ որ եղնադարմանութեան նկատմամբ բարիք, նոյնը կ'ըսենք և գոմչոց համար ալ, այսու միայն զանազանութեամբ՝ որ եզն ջրով մաքրութեան շատ կարօտութիւն չունի, իսկ գոմէջն գոնէ ձմեռն ամիսը միանգամ պէտք է լուանալ սապոն ջրով, միշտ սանտրել ու խաշաւել՝ և կտաւատի ձիթով օծել, որպէս զի կենդանի չգոյանայ: Իսկ ամառն թէպէտ ինքնին ջրասէր ու տրզմասէր է, սակայն գոնէ երկու ամիս միանգամ նորէն մաքրուելու պէտք ունի: Մատակին կաթն, կարագն ու սերն շատ յարգի են. անհաւատալի թերեւս չգիտողաց և չտեսից, սակայն մատակի կաթն, սերը ու եզն թեթև է ու քմապարար քան զկովուն ու զոյխարին: Գոմոյ միսն սևորակ բայց ախորժահամ է. կաշին թանկագին ու եղլիւրքն կարևոր 'ի գործածութիւն տեղացւոց:

1 ՏՃ. գաւառէ գործի երկաթի կենդանիներ քերելու համար, զոր հայք խաւար կուեն, անկէ ելած է բոյն խաւարէ:

Կը շարունակուի:

Յ Գ Գ Գ Ա Յ Գ Ա Յ Ի Ն Ե

Գ

Իմ աչաց լոյս, իմ նազելի,
 Իմ գեղեցիկ լոյս սիրելի,
 Լիցուք ընդ քեզ 'ի մի հոգի: Պրօ՛, պրօ՛,
 (պրօ՛.)
 Դիցուք 'ի բաց զառիթ չարի:

Աիրով սրտի յօծարեացուք,
 Յերկոտութեանց հեռի լիցուք,
 Հողով մարմնով ուրախացուք,
 Եւ անցուցուք զօրս 'ի բարի:

Ո՛ր են նախնիքն մեր որ անցին.
 Չեն 'ի միջի ոչ երեկն,
 Գնացին 'ի բաց և զմեզ նային.
 Օր մի և մեզ երթալ պիտի:

Հիւսեալ աւուրք կենաց մերոց
 Չես հովանի անցանկոց,
 Ըստ սաղմոսին սրբոց երգոց՝
 Լուծեալ դընիմք 'ի տապանի:

Քանզի չափով են մեր աւուրք
 Եթէ դժուարք և եթէ դիւրք.
 Եթէ սակաւք և եթէ բիւրք,
 Համայն եզրի և դադարի:

Իսկ յապաղ որ գալոց է
 Չեմք խելամուտ թէ ընդ որոց է.
 Վասն այնորիկ հոգալոց է
 Չի 'ի բարին գայ կատարի:

Արդ ձեզ ասեմ ինձ լրսեցէք,
 Ըզարտուս ձեր սիրով լըցէք: